Հավելված
Հաստատված է Սարչապետ համայնքի
ավագանու 2013թվականի փետրվարի 19-ի
թիվ 7-Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՍԱՐՉԱՊԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ
2013 – 2016թթ.

Կազմեց համայնքի ղեկավար Բորիս Բարոյանը

- 2013թ. -

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քառամյա ծրագրի էությունը ---------- 3

1. Համայնքի սոցիալ-տնտեսական պայմանների և իրավիճակի վերլուծությունը ---------- 4-10

2. Համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը ---------- 11

3. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները ---------- 12

4. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ կարևորության ծրագրերի, նպատակների, ֆինանսավորման ձևակերպումը ---------- 13-14

5. Համայնքի զարգացման քառամյա ծրագրի հիմնական ցուցանիշները ---------- 15

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային հնարավորությունների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք իրատեսական քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը նախատեսում է քառամյա կտրվածքով համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծումը և դրան համապատասխան ծրագրանպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

Քառամյա ծրագրի բուն միտքը համայնքի պայմանների և սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությունն ու գնահատումն է, ինչի մասին ամբողջական պատկերացում կազմելու համար պետք է առաջնային ուշադրություն դարձնել նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների գնահատմանը, առկա հիմնախնդիրների վերհանմանը, սոցիալական ու տնտեսական երևույթների կանխատեսմանը, համայնքի ուժեղ և թույլ կողմերի բացահայտմանը:

Քառամյա ծրագրում ներառվում է համայնքի զարգացման վրա ազդող արտաքին միջավայրը՝ միասնությամբ տեղական խնդիրների: Քառամյա ծրագրի կարևոր բաղադրամասերից է նաև համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը քառամյա ժամանակահատվածում: Յուրաքանչյուր ծրագրի իրականացում կախված է ֆինանսական հնարավորություններից՝ ինչպես սեփական միջոցներից, այնպես էլ պաշտոնական տրանսֆերտներից ու հանրապետական ու մարզային ծրագրերից:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

1.1 ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔ, ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սարչապետի համայնքը կազմավորվել է 19-րդ դարի 20-30-ական թվականներին: Բնակչության հիմնական մասը գաղթել է Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Մոլեսման գյուղից, որոնք տեղահանվել են վերոհիշյալ գյուղից 1826-28 թթ. Ռուս-Պարսկական պատերազմի օրերին:

Գյուղը հյուսիսային մասից սահմանակից է Վրաստանին, գյուղի տարածքում է գտնվում Վիրահայոց լեռնաշղթայի բարձրությամբ երկրորդ լոք սարը: Գյուղը կրում է Սարչապետ անվանումը, որը երբևէ փոփոխության չի ենթարկվել և որի ծագումնաբանությունը հայտնի չէ:

Գյուղն ունի երկու եկեղեցի, որոնցից մեկը 1913թ. կառուցված, գտնվում է կիսավեր վիճակում և չի ծառայում իր նպատակին, մյուսը «Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին» հիմնադրվել է 2005 թվականին և գործում է:

Բնակավայրի ռելիեֆը լեռնային է, ամռանը զով է, ձմռանը չափավոր ցուրտ: Ամռան տևողությունը 163 օր է, ձմռանը 202 օր: Տարեկան միջին ջերմաստիճանը 3.6 C է, տեղումների քանակը 700-720 մմ: Առանձին տարիներին երաշտ է լինում: Կարկտային օրերի թիվը կազմում է 20-25 օր:

Համայնքի վարչական տարածքը 2390 հա է, բարձրությունը ծովի մակարդակից 1700 մ է: Գյուղի հողերը գտնվում են 30-40 թեքության վրա: Բնակլիմայական անբարենպաստ պայմանների ու աշխարհագրական վատ դիրքի հետևանքով բերքատվությունը ցածր է: Համայնքի հեռավորությունը մարզկենտրոնից 70 կմ է, իսկ նախկին շրջկենտրոնից 15 կմ:

1.2 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 2856 բնակիչ, այդ թվում՝ մշտապես ներկա 1953 մարդ, ժամանակավոր բացակա 203 մարդ, երկարատև բացակա 700 մարդ: Ժամանակավոր համայնքում բնակվում է 79 մարդ:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է.

1.	Երեխաներ	(0-5տ)	150
2.	Դպրոցահասակ	(6-17տ)	322
3.	18-60 տարեկան		1200
4.	61տ և բարձր		360
5.	Թոշակառուներ		362
6.	Նպաստառուներ		80
7.	Հաշմանդամներ		86
8.	Աշխատունակներ		1000

Համայնքում կա 622 առանձնատուն: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը հասնում է 20-30-ի: Գործազրկության պատճառով արտագաղթը շարունակվում է, ինչը բերում է բնակչության նվազեցմանն ու ծերացմանը:

1.3 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գյուղի բնակչությունն աղքատ է, որովհետև աննպաստ են գյուղատնտեսությամբ զբաղվելու պայմանները, ցածր է տնտեսության ապրանքայնության աստիճանը: Առաջընթացի խոչընդոտ են հողակտորների վատորակ լինելը, կլիմայական անբարենպաստ պայմանները, աշխարհագրական վատ դիրքը, գյուղմթերքի իրացման շուկայի պակասը, ինչպես նաև գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների քանակի պակասը:

Համայնքում գյուղատնտեսության փոքր-ինչ չափով զարգացած ճյուղերից են անասնապահությունը և հողագործությունը:

Անասնապահության մեջ հիմնականում խոշոր եղջերավոր անասունների բուծումն է: Այս բնագավառում մեծ դժվարություններ են առաջանում հատկապես երաշտի տարիներին, երբ խոտի անբավարարության պատճառով դժվարանում է անասունների մսուրային շրջանի կազմակերպումը:

Հողագործության բնագավառում հիմնականում զբաղվում են ցորենի, գարու, կարտոֆիլի արտադրությամբ: Կարտոֆիլի 1 հա-ի միջին բերքատվությունը 90 g է, հացահատիկինը 10 g:

Գյուղատնտեսության ցուցանիշները

Անասնագլխաքանակը, հատ	
1. խոշոր եղջերավոր անասուններ	566 գլուխ
այդ թվում կովեր	315
2. խոզեր	24
այդ թվում մայրեր	7
3. մանր եղջերավոր անասուններ	68
4. ավանակներ	5
5. ձիեր	3
6. թռչուններ	1001
այդ թվում հավեր	441
7. մեղվաընտանիքներ	40

Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ	
1. տրակտորներ	15
2. բեռնատար մեքենաներ տարբեր մակնիշի	10
3. տրակտորային կցասայլակներ	7
4. տրակտորային խոտհնձիչներ	9
5. հատիկազտիչ մեքենաներ	1
6. տրակտորային գութաններ	7

1.4 ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐ

1. Համայնքի վարչական տարածքը	2390 հա, որից
2. Վարելահողեր	671.7 հա
3. Խոտհարք	584.1 հա
4. Արոտավայրեր	505 հա
5. Անօգտագործելի հողեր	26.104 հա
6. Ձորեր	68.311 հա
7. Դաշտային ճանապարհներ	29.609 հա
8. Պետական անտառ	324.2 հա
9. Տնամերձ հողեր	155.444 հա
10. Բնակելի շենքերի տակ	1.564 հա
11. Մշակույթի կենտրոն	0.158 հա
12. Մանկապարտեզ	0.133 հա
13. Գերեզմանոց	3.836 հա
14. Կարի ֆաբրիկա	0.426 հա
15. Բուժ. կետ	0.068 հա
16. էլ. ցանց	0.500 հա
17. Եկեղեցի	0.034 հա
18. Դպրոց	0.638 հա
19. Հուշարձան	0.020 հա
20. Գյուղամիջյան փողոցներ	18.626 հա
21. Սեփականաշնորհված հողեր	1256.3 հա, որտեղ՝
մեկ հողաբաժնի չափը	0.91 հա է

Ըստ կադաստրային կարգի համայնքում 1-ին և 2-րդ կարգի վարելահողեր չկան: Հողատարածքներն ունեն հետևյալ դասակարգումը.

3-րդ կարգ 49.9 հա
4-րդ կարգ 203.1 հա
5-րդ կարգ 378.1 հա

1.4.1 Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման մասին

Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի օտարում 2013-2016թթ-ի ընթացքում տեղի կարող է ունենալ միայն պահանջարկի դեպքում:

1.5 ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ, ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

1. Մշակույթի կենտրոն	-1 միավոր (վերանորոգման կարիք ունի)
2. Մանկապարտեզ	-1 միավոր (ջեռուցված ու կահավորված վիճակում է)
3. Եկեղեցի	-1 միավոր (կիսավեր)
4. Մարդատար ավտոմեքենա	-1 միավոր (բարվոք վիճակում)
5. Հողատարածքներ	- 1075.11 հա

1.5.1 Համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների օտարման մասին

Համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների օտարում 2013-2016թթ-ի ընթացքում չի նախատեսվում:

1.6 ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Համայնքն ունի մեկ մշակույթի կենտրոն, որտեղ մինչև 2009թ-ը գործել է մեկ գրադարան: Գրադարանը 2009թ-ին հանձնվել է համայնքի միջնակարգ դպրոցին և շարունակում է սպասարկել համայնքի ողջ բնակչությանը:

1913 թ. կառուցված եկեղեցին գտնվում է կիսավեր վիճակում: Գործում է 2005 թ. կառուցված առաքելական եկեղեցին: Գյուղի հյուսիսային մասում «Լոք» սարի վրա կա մատուռ, ուր ամեն տարի մայիս ամսին կատարվում է ուխտագնացություն՝ «Հիսուսի համբարձման օրը»:

Համայնքում ամեն տարի անցկացվում է համագյուղացի Աշոտ Պալաքյանի անվան շախմատի հուշամրցաշարը:

Գյուղը չունի սպորտ-հրապարակ, մարզադահլիճ, ինչը համայնքի երիտասարդության մեջ առաջացնում է լուրջ դժգոհություն:

Գյուղն ունի մեկ միջնակարգ դպրոց, ուր սովորում են 220 աշակերտ:
90 տեղանոց մանկապարտեզի շենքը չի ծառայում իր նպատակին ֆինանսական նեղ միջոցների պատճառով: Դպրոցի շենքում կա վերանորոգված 200 մ տարածք մանկապարտեզ ծառայեցնելու համար, սակայն սա նույնպես չի գործում համապատասխան գույք, ջեռուցում ու այլ անհրաժեշտ պարագաներ չունենալու պատճառով:

Համայնքն ունի մեկ բուժ- կետ, որը սկսել է գործել 2004թ-ից: Բուժ- կետն ունի համապատասխան գույք, սարքավորումներ, դեղանյութեր: Համագործակցում է «World Vision» բարեգործական կազմակերպության հետ:

Համայնքում կա կաթի գործող արտադրամաս, արտադրում է պանիր «Լոռի» տեսակի:
Համայնքում է գտնվում Տաշիրի կարի ֆաբրիկայի մասնաճյուղը, որը սեփականաշնորհված է և չի գործում:

Համայնքի կենտրոնում է գտնվում տիպային սեփականաշնորհված խանութի շենքը: Գործում են նաև 6 առևտրական կետեր:

Կապի հանգույցի ու փոստային բաժանմունքը տեղակայված է Մշակույթի կենտրոնում հատկացված մեկ սենյակում:

Էլ. ցանցի հզորությունը 35000 կվտ/ժ է, որը սպասարկում է նաև հարևան համայնքներին:

Համայնքին օգնություն են ցուցաբերում ՌԴ-ում ապրող ու աշխատող սարչապետցի հովանավորները:

1.7 ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Գյուղը կառավարում է համայնքի ղեկավարը (գյուղապետ), որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Համայնքի ղեկավարի կողմից կազմավորված աշխատակազմի կառուցվածքը հետևյալն է.

Համայնքի ղեկավար	1 դրույք
Համայնքի ղեկավարի տեղակալ	1 դրույք
Համայնքի ղեկավարի օգնական	1 դրույք
Աշխատակազմի քարտուղար	1 դրույք
Գլխավոր մասնագետ	1 դրույք
Առաջատար մասնագետ	1 դրույք
Առաջին կարգի մասնագետ	2 դրույք
Մեքենագրուհի	1 դրույք
Վարորդ	1 դրույք
Հավաքարար	1 դրույք

Համայնքի ավագանին կազմված է յոթ անդամից:

Գյուղապետարանի և ավագանու անդամների միջև կա սերտ կապ և համագործակցություն:

Կից ներկայացված հավելվածում բերված է Սարչապետ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի և ավագանու կառուցվածքի գծապատկերը

ՍԱՐՉԱՊԵՏԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ ԵՎ ԱՎԱԳԱՆԻ

Սարչապետ համայնք

Համայնքի ղեկավար

Համայնքի ավագանի
(յոթ անդամ)

Համայնքի ղեկավարի
տեղակալ

Համայնքի ղեկավարի
օգնական

Աշխատակազմի քարտուղար
Գլխավոր մասնագետ
Առաջատար մասնագետ
Առաջին կարգի մասնագետ
Առաջին կարգի մասնագետ

Մեքենագրուհի
Վարորդ
Հավաքարար

1.8 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

1.8.1 Համայնքի ուժեղ կողմերը

- Բնակչության զբաղվածությունը գյուղատնտեսությամբ
- Պահուստային հողերի առկայությունը
- Գործող նոր եկեղեցու առկայությունը
- Առևտրային օբյեկտների առկայությունը
- Բուժ-կետի առկայությունը
- Նորոգված, ջեռուցված, անհրաժեշտ գույքով և դպրոցական տարբեր պարագաներով
  ապահովված դպրոցը
- Ասֆալտապատած Նորաշեն-Սարչապետ հատվածը և ասֆալտապատած ներհամայնքային կենտրոնական ճանապարհը

1.8.2 Համայնքի թույլ կողմերը

- Մանկապարտեզի շենքի նպատակային չօգտագործելը
- Ձրագծի և խմելու ջրի պակասը
- Կարի ֆաբրիկայի անգործությունը
- Գյուղատնտեսական տեխնիկայի և գործիքների պակասը,
  եղածի անսարքին լինելը
- Գյուղապետարանի ենթակայության տեխնիկայի և տրանսպորտի միջոցների պակասը
- Բնակչության որոշ մասի (հետզհետե ավելի է մեծանում այդ մարդկանց թիվը) սեփականաշնորհված հողերից հրաժարվելը
- Գործազրկությունը
-

1.8.3 Համայնքի հնարավորությունները

- Սպասարկման ոլորտի աշխատանքների բարելավումը
- Մեծ աշխատուժի առկայությունը
- Պահուստային հողերի նպատակային օգտագործումը
- Դպրոցի շենքում մանկապարտեզի համար հատկացված տարածքի նպատակային օգտագործումը

1.8.4 Համայնքին սպառնացող վտանգները

- Գյուղում առկա մեծ աշխատուժի արտահոսքը արտերկիր, ինչը հանգեցնում է գյուղատնտեսության մակարդակի ցածրացմանը
- Սեփականաշնորհված հողերից հրաժարվելը, որի պատճառով նվազում է գյուղատնտեսական մթերքների արտադրությունը և իջնում է բնակչության կենսամակարդակը
- Աշխատատեղերի պակասը
- Բնակչության մասսայական արտագաղթը ՌԴ

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատման ու կանխատեսման սխեման հետևյալն է.

	Եկամուտի տեսակը	2012թ. փաստացի	2013թ. նախատեսված	2014թ. կանխատեսում	2015թ. կանխատեսում	2016թ. կանխատեսում
Ա	Հարկային եկամուտներ					
1	Հողի հարկ	2179.0	3464.3	2200.0	2300.0	2500.0
2	Գույքահարկ	2769.3	2742.6	2750.0	2780.0	2800.0
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկ. եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	311.9	260.0	270.0	280.0	300.0
Գ	Ոչ հարկ. եկամուտներ					
1	Պետ. պահուստային հողերի վարձավճար	301.8	347.2	350.0	350.0	350.0
2	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	64.0				
3	Տեղական վճարներ					
4	Վարչական իրավախախտություն	100.0	10.0			
Դ	Պաշտոնական տրանս-ֆերտներ, դոտացիա	24397.0	27060.5	29000.0	30000.0	31000.0
1	Կապիտալ սուբվենցիա	5000.0				
	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	35403.2	33884.6	34570.0	35710.0	36950.0

(հազ. դրամ)

Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը մեծ ու կարևոր նշանակություն ունի համայնքում կոնկրետ ծրագրեր իրականացնելու համար:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Նախատեսվում է անցկացնել մի շարք բարեփոխումներ նպատակով՝ հնարավորինս բարելավել համայնքի բնակիչների ապրելակերպը, սոցիալ-տնտեսական պայմանները, գյուղը դարձնել բարեկեցիկ բնակավայր

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Կատարման ժամկետը	Պատասխանատուն, կատարողը
1	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և խճապատում	2013-2016թթ.	Գյուղապետարան
2	Կազմակերպել ծառատունկ և ստեղծել կանաչ գոտի	2013-2014թթ.	Գյուղապետարան
3	Աջակցել բնակչության շրջանում հակահամաճարակային և կարանտին միջոցառումների կազմակերպումը	2013-2016թթ.	Գյուղապետարան, Բուժ. կետ
4	Աջակցել անասնաբուժական ծառայությանը՝ կենդանիների հիվանդությունների կանխման նպատակով միջոցառումների իրագործմանը	2013-2016թթ.	Գյուղապետարան, անասնաբուժական ծառայություն
5	Հնարավորության չափով աջակցություն ցուցաբերել հաշմանդամների, կերակրողներին կորցրած ընտանիքների, պատերազմի վետերանների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պայմանների բարելավման ուղղությամբ	2013-2016թթ.	Գյուղապետարան, համայնքի ավագանի
6	Աղբահանություն և սանիտարական մաքրման կազմակերպում	2014-2015թթ.	Գյուղապետարան

4. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՁՆԱՀԵՐԹ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Հ/Հ	Աշխատանքների անվանումն ըստ բնագավառների	Նկարագիրը	Նպատակը	Ֆինանսավորման աղբյուրը և իրականացման մոտավոր արժեքը	Կատարման ժամկետը
		1. Կառուցապատում և շինարարություն			
1	*«Մշակույթի տուն» շենքի վերանորոգում /ջեռուցում, նոր դուռ ու լուսամուտի տեղադրում, դահլիճի հատակի հիմնովին նորոգում, ներքին հարդարանք/, հարակից տարածքի կանաչապատում*	*Շենքը չունի ջեռուցման համակարգ, անմխիթար վիճակում են գտնվում դռներն ու լուսամուտները: Դահլիճն ունի մեծ բեմ, 360 նստատեղ, հատակի տախտակը հիմնովին փտած վիճակում է: Ներքին հարդարանքի կարիք ունեն շենքի գրեթե բոլոր սենյակները:* *«Մշակույթի տուն» շենքում են գտնվում բուժ. կետը, «Հայ Փոստ» ՓԲԸ-ի համայնքում գործող մասնաճյուղը, գյուղապետարանը: Այստեղ են գործում նաև պարի և կարատեի խմբակները:*	*Պահպանել շենքի ֆիզիկական կայուն վիճակը, տեսքը*	*Համայնքի բյուջե, պետ. բյուջե, մարզպետարան, այլ:* *Շուրջ 20 մլն դրամ*	2013-2014թթ.

2. Ֆիզիկական կուլտուրա և սպորտ

1	Պարզ տիպի սպորտային հրապարակի կառուցում, մարզասարքավորումների և մարզահագուստի ձեռքբերում	Համայնքը չունի սպորտային հրապարակ և մարզական գույքի որևէ տեսակ, ինչի պատճառով երիտասարդը ստիպված է լինում օգտվել այլ համայնքներից, որն էլ կախված է ֆինանսական միջոցների և կազմակերպական աշխատանքի հետ: Այս վիճակն էլ առաջացնում է երիտասարդության մեջ դեպի սպորտ պասիվ վերաբերմունք:	Պահպանել երիտասարդության ֆիզիկական և առողջական ամուր վիճակը, նպաստել նրանց դերի բարձրացմանը ֆիզկուլտուրայի բնագավառում:	Համայնքի բյուջե, պետ. բյուջե, մարզպետարան, այլ: Շուրջ 10 մլն դրամ	2014-2016թթ.

3. Գյուղատնտեսություն

1	Գյուղատնտեսական տեխնիկաների ձեռքբերում	Քանի որ համայնքը չունի գյուղատնտեսական տեխնիկայի որևէ տեսակ, ուստի գյուղատնտեսական գրեթե ամեն աշխատանքի կատարման համար համապատասխան տեխնիկան համայնք է մտնում դրսից՝ հարևան համայնքներից, այլ մարզից: Հիմնականում այստեղից էլ առաջանում է աշխատանքի դիմաց վճարի բարձր չափը, ինչն էլ հետ է պահում գյուղացուն գյուղատնտեսությամբ զբաղվելուց:	Աջակցել գյուղացիական տնտեսություններին արտադրության կազմակերպման և ածի գործում	Համայնքի բյուջե, պետ. բյուջե, մարզպետարան, այլ: Շուրջ 50 մլն դրամ	2013-2016թթ.

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Հ/Հ	Ցուցանիշներ	Չափի միավորը	2012թ. փաստ.	2013թ. կանխ.	2014թ. կանխ.	2015թ. կանխ.	2016թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8
1.	Համայնքի տարածքը	հա	2390	2390	2390	2390	2390
2.	Բնակչության թիվը	մարդ	2816	2856	2870	2880	2900
3.	Ծնունդը	մարդ	25	30	30	35	35
4.	Մահացություն	մարդ	26	20	20	20	20
5.	Առևտրական օբյեկտների թիվը	հատ	6	6	7	7	7
6.	Պահուստային հողեր	հա	40.5	40.5	40.5	40.5	40.5
7.	Պահուստային հողերի օգտագործման մակարդակը	%	70	70	70	70	70
8.	Ներհամայնքային ոռոգման ցանցի երկարությունը	կմ	6.5	7.5	8	9	10
9.	Խմելու ջրի ներհամայնքային ցանցի երկարությունը	կմ	-	-	-	-	-
10.	Ջրի կորուստները ցանցում	%	-	-	-	-	-
11.	Բնակ. կարիքավոր ընտանիքների թիվը	հատ	24	20	15	10	10
12.	Գործազրկության մակարդակը	%	70	65	60	55	50
13.	Ներհամայնքային չբարեկարգված փողոցների երկարությունը	կմ	10	8	4	2	2
14.	Դաշտամիջյան ճանապարհների երկարությունը	կմ	10	8	4	2	2
15.	Մասնավոր բնակ. ֆոնդը	հազ. քմ	82.500	82.500	82.500	82.500	82.500
16.	Գազօգտագործման համար պահանջվող խողովակների երկարությունը	գմ	-	-	-	-	-
17.	Աշակերտների թիվը միջնակարգ դպրոցում. այդ թվում տարրական դպրոց միջին դպրոց ավագ դպրոց	մարդ	220 64 130 26	225 69 120 26	230 70 130 30	240 75 135 30	250 80 135 35
18.	ՈՒսանողների թիվը	մարդ	10	12	15	20	20
19.	Երեխաների թիվը մանկապարտեզում	մարդ	-	32	40	50	60
20.	Գյուղապետարանում և ենթակառույցվածքներում աշխատողների թիվը	մարդ	10	17	27	30	35
21.	Արտագաղթ	%	30	25	25	20	15
22.	Ոռոգման համակարգի տակ ընկած հողերը	հա	-	-	-	-	-